Արձանագրություն N 2.1
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնանշման հարցման
Գնահատող հանձնաժողովի նիստի (շարունակություն)

ք. Երևան

16 մարտի 2021թ
ժամը 15:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Է.Հակոբյանը
անդամներ՝ Հ.Մարգարյանը, Ա.Սարուխանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին (շարունակություն)

(Է.Հակոբյան)

1. Գնահատող հանձնաժողովը. ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և արձանագրեց, որ.

1.1 Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ի ներկայացրած հայտում կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

ա/ 2-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ, 19-րդ, 26-րդ, 34-րդ, 47-րդ, 49-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկի ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ԱԱՀ-ի դրույքաչափին:

բ/ 32-րդ չափաբաժնի գնային առաջարկ «Արժեք», «ԱԱՀ», «Ընդհանուր գինը» սյունյակներում գնային առաջարկը տառերով գրված չէ:

1.2 մասնակիցների կողմից 11-րդ, 44-րդ, չափաբաժինների համար առաջարկված գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված նախահաշվային գինը, 8-րդ, 21-րդ չափաբաժինների համար առաջարկված նվազագույն գները հավասար են:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ի հայտը 2-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ, 19-րդ, 26-րդ, 34-րդ, 47-րդ, 49-րդ և 32-րդ չափաբաժինների համար գնահատել անբավարար

բ/ մերժել Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ի հայտը 2-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ, 19-րդ, 26-րդ, 34-րդ, 47-րդ, 49-րդ և 32-րդ չափաբաժինների համար հետևյալ հիմնավորմամբ. գնային առաջարկի ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ավելացված արժեքի հարկի դրույքաչափին, 32-րդ չափաբաժնի գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատման արդյունքներով և հաշվի առնելով, որ 11-րդ, 44-րդ, չափաբաժինների համար առաջարկված գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված նախահաշվային գինը, 8-րդ, 21-րդ չափաբաժինների համար առաջարկված նվազագույն գները հավասար են, որոշեց.

ա/ կասեցնել նիստը ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.6 կետի համաձայն և 11-րդ, 44-րդ, 8-րդ, 21-րդ չափաբաժինների համար առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

բ/ գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու և ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. մարտի 19-ին ժամը 14.30-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Է.Հակոբյան

անդամներ՝ _____ Հ.Մարգարյան

_____ Ա.Սարուխանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան